ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան
15 հոկտեմբերի 2026թ. ժամը 10:30

Մասնակցում է

Հանձնաժողովի նախագահ՝ Տարոն Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տիգրան Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Տ. Վարդանյանը նիստը հայտարարեց բացված և, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 14.10.26թ-ին ներկայացված գնման հայտը, ինչպես նաև ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյանի 14.10.26թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 1991-Ա հրամանը, ներկայացրեց ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության 2027թ.-ի կարիքների համար «Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների» գնման հայտարարության և հրավերի տեքստերը, գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ փաթեթը: Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց՝

1. -հաստատել էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը,
2. -հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հետադարձ աճուրդի ավարտից հետո, նույն օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց պ. 63:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
Հանձնաժողովի

Նախագահ՝_____ Տ. Վարդանյան

Քարտուղար՝_____ Ն. Աբովյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Հ. Հովհաննիսյան

2. _____ Տ. Ղազարյան